

մեծ գերը մեր քաղաքական, ընկերական, տնտեսական և իմացական կեանքին մէջ:

* * *

Վերջին նկատողութիւն մըն ալ: Ներկայացնելով Հայաստանի քննական պատմութեան ներկայ հատորը, ինչպէս նաեւ անոր յաջորդող ժամանակակից պատմութեան հատորները հայ ժողովուրդին, ես կը համարձակիմ յայտարարելով՝ թէ իմ գրելու խաւոր նպատակս և փառասիրական միակ տենչանքս եղած են ծառայել Հայ ժողովուրդին, լոյս սփռել անոր մէջ, որ չափազանց մութ ապրած է: Թէեւ գիտեմ, որ վկայութիւններով խճողուած գիրք մը ժողովրդական չի կրնար ըլլալ, զի ժողովուրդը վիպական և դիւցազնական գրուածքներէ համ կ'առնէ, որոնք կը խօսին սրտի հետ, բայց և այնպէս խորապէս համոզուած եմ, որ նա ոչ թէ պիտի տայ իր մտքին և այս ուսումնասիրութիւնը զօրաւոր խթան մը պիտի դարձնէ գնահատելու լատին ճարտարախօս, փիլիսոփայ և պետական հին հանճարի մը՝ Ալիկերոնի սա անմոռանալի սահմանումը պատմութեան օգտակարութեան մասին: «Պատմութիւնը կ'ըսէ նա, ժառանգանքներն վիպական են, ձգնարտութեան յոյսը, կեանքի յիշատակը, վարքի վարդապետը, հետքերն պատգամաւոր հրեշտակը»:

Պատմութիւնը նաեւ սփոփարար դեր մը կը կատարէ հալածական ժողովուրդներու մօտ: «Նա կը բանայ, - ինչպէս իրաւամբ կ'ըսէ հայ անուանի պատմագիր մը՝ Հ. Յովսէփ Վ. Գալթիանց, - սաստաւածային արդարութեան թատերաբեմը, անով որ կը վկայէ ամէն դարերու մէջ եղած երկու մեծ ազդեցութիւններու՝ որոնցմէ մին կը ցուցնէ բարիքի կեղծանշանը ոչ թէ ոչ գորտքիւնը, իսկ միւսը՝ չարիքի պատիժը՝ որ քեպետ անագան՝ բայց անվրէպ վրայ կը հասնի»:

Պատմութիւնը միայն կրթութեամբ ու բանագէտ անձերու հետաքրքրութիւնը չի յազդեցներ, այլ և ամէն հասակ և ամէն տարիքան անոր մէջ կը գտնէ իր լուսաւորութիւնը: «Քաղաքագէտը, կ'ըսէ նոյն հայ գրիչը, իր խորհուրդները, կարծիքները և մտածութիւնները պէտք է չփէ պատմութեան փորձաքարին, և պատմութիւնը իրեն կը ցուցնէ՝ թէ պէտք է իր տեսութիւններուն վրայ շատ վստահի և անյայտը ստուգի տեղ գնէ. պատմութեան միջոցով է որ իրաւագէտը կը հասնի անցեալ ու ներկայ օրէնսդրութիւններու դիտարկութեան՝ որով տեղեակ կ'ըլլայ թէ այդ օրէնքներէն ո՞րը աւելի բարեւար ազդեցութիւն գործեր է ազդելու վրայ. պատմութիւնն է որ բազում դարերու փորձով՝ յորդ և սուսա նիւթ կը մատակարարէ ճարտասանին, բանաստեղծին և գեղարուեստի հետեւողներուն»:

Եւս համոզուելով համոզուած եմ որ հայ ժողովուրդին խնայուած կ'ըլլային շարք մը մեծամեծ տղէտներ, եթէ անոր քաղաքագէտները ուշի ուշով ուսումնասիրած ըլլային պատմութեան դասերը, վասն զի անոնց միտքը պիտի լեցնէր օգտակար փորձերով, յստակ ու ճշտագոյն դատաստանով մօտաւոր և ապագայ իրերու վրայ, և ապաւորիչ օրինակներով զանոնք պիտի առաջնորդէր յառաջատես զգուշութեան և խորհրդական իմաստութեան ճամբուն վրայ, անոր առջեւ դնելով սա անհերքելի ճշմարտութիւնը, թէ «ամէն ազգ իր ձեռքով կը կերտէ իր բարի կամ չար բախտը», հաստատելով նուրբ դիտարկութեամբ հատու առաջնութիւնը՝ թէ «ամէն ժողովուրդ արժանի է իր ճակատագրին»:

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԱՆ

(Չարտունակելի)

Ս. Ղազար 31 Մայիս 1946

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԷ

ԿԱՆԱՆՁ ՏԵՐԵԻԸ

Առանց ծաղկի, աղքատի պէս արհամարհ
Անհամարձակ շեմիս վրան կը սպասես.
Ներս մըտիր քոյր ընտանիքովդ խոնարհ
Գոյներու տեղ կեանքդ է որ ինձ կը բերես:

Ես ալ այսպէս երբեք ժրպիտ չունեցայ
Երբեք բուրեան ես չունեցայ ծաղիկներ.
Չոր հողին մէջ երկինքն ի՞նչպէս ցոլանայ,
Ներս մըտիր քոյր, քիչ մը դալար գէթ ինձ բեր:

Ո՛րքան երկար եղան կեանքիս ճամբներն,
Ո՛րքան սրտեր փնտռեցի ես սիրելու.
Ներս մըտիր քոյր վաղուան համար քիչ մ'ոյոյս բեր:

Յոյսը թէպէտ սիրոյ նըման չի ծաղկիր,
Բայց կը մընայ դալար սլքակ վշտերու.
Գոյր իմ իբրեւ անմահութիւն ներս մըտիր:

Քինիս, 2 Մեպտիմ. 1942

ՆԵՐՈՒՄ

Տէ՛ր, զօրութիւն տուր մարդկութեան ներելու
Տարածելով Գեղի նըման իմ թեւերս.
Թշնամիներս իմ շուքիս տակ կանչելու
Որ ընծայեմ արցունքներուս հետ իմ սէրս:

Բաւ է համբոյր մը սիրոյ մէջ եւ ոխի
Որ փարատին թխստոս ամպերն աչքերէն,
Ես կ'ողբեմ այս քաղցրութիւնն աշխարհի
Բաժնելով սիրտս իբրեւ նշխար հողեղէն:

Թէ դժնիկով ինձ խաչ չինեն մահաբեր
Ո՛վ, Աստուած իմ բերկրանքն ինձ տուր ներելու.
Աչքերս երկինք, սիրտս աւաղան մաքրարեր
Աղբիւր ըլլամ արեւոտ ձեռք լըւալու:

Եւ հոն ուր ինձ մարդիկ կոչեն «խաչեցի»,
Հոն խունկի պէս սիրտըս մըլտայ աւելի

Կեանքս այն ատեն պիտ' աշխարհքիս պատկանի
Երբ քիչ մը սէր տամ մարդկութեան ծարաւի:

Թշուառ է մարդն ու միշտ կարճատ դրթութեան
Կ'ուզեմ ըլլալ Պրոպատիկէ աւազան.
Եւ անոնց ալ որ յոյս չունին յարութեան
Երգերս ըլլալ երկինք հասնող շարական:

Զղջացողին աններելի մեղք չըկայ
Ոչ գերեզման, եւ ոչ մէկ դուռ ամրափակ,
Թող իմ թեւերս ըլլան սանդուխ շափիւղայ,
Երամ երամ վըրան մարդիկ հըրեշտակ:

Քեմիա 5 փետրուար 1943.

ԽԱԶՈՒԱԾ ՍԷՐԸ

Ձեն կախեր միայն ծառէն յանցաւորն
Եւ ոչ լոկ Յիսուսն ի խաչ հանեցին.
Գամեցին փայտին իմ սիրտս ալ այսօր
Եւ կողէս արեան վըտակ մը բացին:

Նիզակն էր լեզու, ճաճանչի պէս սուր
Որ այնքան արին սըրտէս բըխեցուց.
Երբ ես խնդրեցի գաւաթ մը ցուրտ ջուր
Ինձ լեզի տըւին՝ սիրոյ ապացոյց:

Բաժնեցին իրար մէջ իմ տենչանքներս,
Նորեկ ծիրանի գեղեցիկ դարնան,
Երջանիկն այն էր որ առաւ իմ սէրս
Եւ այն որ պահեց խօսքերս թողութեան:

Եւ հոն Գողգոթայ կոչեցին մարդիկ,
Սրտին տեղ, ըսին, թող խաչը ծաղկի.
Անցորդներն երբ այդ տեսնեն հրաշալիք
Գիտնան որ սիրողն այսպէս կը խաչուի:

Քեմիա 6 Գեկտեմբեր 1943

Գ Ա Ն Կ Ը

Դուն ալ երբեմն իմաստութեան մը տաճար
Դուն ալ սրտի մ'երջանկութեան տաղաւար.
Կը լեցուէիր արձագանդով աշխարհի
Երազելով հորիզոններ ծիրանի:

Հիմա անցեալն ունիս միայն իբրեւ կեանք
Եւ որոնում, ոչ սիրելու անըրջանք.
Կը քալես հին հետքերուդ հետ խարխափուն
Խառնըւելով փոշիներուն, քարերուն:

Ու կը կռփեն քեզ անտարբեր անցորդներ.
Խոռոչներէդ կը սուլէ հովն ողբասէր.
Թերեւս ինձ հայր, ազգական ես սիրելի,

Որոնց համար այնքան արցունք թափեցի:
Թոյլ տուր խըռով ճակատս դընեմ քո ճակտին
Ով լքուած գանկ, ով դու վախճան բոլորին:

Քեմիա 7 Նոյեմբեր 1942

ԱԼԻՇԱՆՆ ՈՒ ԵՍ

Ձէ կարելի չափել հանճարը թիզով
Եւ ոչ արուեստը վաճառել ոսկիով.
Ամէն քերթող իր երգն ունի երկնային
Անխառն ինչպէս ճառագայթներն արեւին:

Երբ թեւ առի բարձրանալու արծուօրէն
Կարծեցի ես ըլլալ մտքի մարգարէն.
Աւիշանն էր հըպորտութեանը պաշտումն
Բայց հեռու էր, հաստատ էր իր վերացումն:

Իր հաւատքն էր ճշմարտութիւնն անափունք
Եւ իր ճակատն Աստուածաշունչ մը խորունկ.
Գարեբն երբեք չըմեղմեցին իր աւիշն
Թարմ է երկինք, թարմ երգերուն մէջ դարուն.

Բազէի պէս դեռ կը շրջի շուրջն արփույն
Մըրրիկին դէմ վստահ իրեն թեւերուն.
Մինչ ես արտոյտ կ'ստոստիմ լոկ ծառէ ծառ
Հաւաքելով սիւզերուն երգը խոնարհ:

Քեմիա 2 Նոյեմբ. 1942

Ա Յ Ս Օ Ր

Կ'ուզէի որ այսօր բացուէր ինձ համար
Նոր կիրակի, տենչանքներուս առաւօտ.
Հոգիս մեծնար, հորիզոնի չափ մեծնար
Ու չըզգայի նոր գալիքի մը կարօտ:

Ամենուրեք տեսնէի վարդ և շուշան
Ծովերն հանգարտ, մարդիկ առանց վշտերու,
Աշխարհս ըլլար խոշոր սրտի մը նըման
Տարածէի թեւերըս դայն գրկելու:

Ու խօսէի ամէնուն հետ իր լեզուն,
Բանալու նոր հոգիներու երկինքներ,
Որքան գաղտնիք պիտ' յայտնէր սիրտը մարդուն
Ձոր կը պահէն շիրմին համար մեռելներն:
Այն, վերջին մարդն այս կիրակին գէթ վայլէ
Որ աշխարհիս դուռն իր ձեռքով պիտ' օխէ:

Քեմիա 9 Մայիս 1945

ՍԱՀՈՒԱՆ ՀԵՏ

Այսօր ըլլանք եղբայր ու քոյր
Գրկենք զիրար տարտամօրէն
Բանանք գաղտնի դամբանի դուռն
Յաւերժութեան դռնանք նորէն

Սիրենք աղօթք, մոմ ու բուրվառ
Լանք ծնրադիր խաչի մը տակ,
Երբ մեր վերան իջնէ խաւար
Յոյսը վառեն մեզի ճըրագ:

Քեզ կը սիրեմ կեանքիս օրերն
Աւելի քաղցր երազելու.
Պատրաստ ըլլամ երբ գայ ձըմեռն.
Հետքերուդ լուռ հետեւելու:

Քեզ համար միշտ սիրտըս բաց է
Ինչպէս սիրուած հիւր մը ծանօթ.
Դուռըս արթուն քեզ կը սպասէ
Ըլլայ գիշեր թէ առաւօտ:

Այսօր ըլլանք եղբայր ու քոյր
Որ փարատին վախն ու կասկած,
Երբոր իջնէ սեւ վարագոյր
Ձերար գրկենք արշալուստուած:

Քեմիա 9 Յուլիս 1944

Փ Ա Ր Ո Ս Ը ⁽¹⁾

Դըժոխորկոր կ'որոտան թնդանթներն աւասիկ,
Եւ իրարու կը բախին մեքենաներ ու մարդիկ.
Աղէտ մը մեծ, ընդհանուր, ջրհեղեղէն աւելի,
Աշխարհն ամբողջ, հող ու ծով, կը վերածէ աւերի:
Հայրենիքդ իմ, հուր ես դուն, կու գայ գարունն ու կ'երթայ,
Բայց չի բերեր ոչ մէկ կոտորելի՝ լուր մը քեզմէ հեռակայ.
Բանաստեղծներ, չեմ լըսեր երգն անոյշ ձեր քընարին,
Սըւիններու տակ պողպատ՝ կու լայ ոգին հանձարին:
Համատարած մութին մէջ, ալեկոծման, անդադար
Դուն կը շողաս, ո՛ր փարոս, հայոց կղզի, Սուրբ Ղազար.
Ահա զիրար կորուսած եղբայրներ բիւր կը յառեն
Աչքերն իրենց, ո՛ր քեզի, աշխարհի չորս ծագերէն.
Վըհատութեան վերեւ մեր աստուածավառ ջահ Յոյսի.
Մեր արտամութեան մէջ անհուն ո՛ր բերկրութիւն ցանկալի:

1942

(1) Կու տանք հոս երկու հնչեակներ՝ ծանօթ Հրաչ Քաջարեանցէն, նախկին Սան Մ.-Ռ. վարժարանի, Ան, որպէս տեղաւաղ խալալիկան բանակին մէջ, բերած է իր օգտակար ծառայութիւնը՝ արժանանալով զնախաժանութիւն և համակրանքի: Այս երկու կտորները, զոր կը հրատարակենք, գրի առնուած են իր զինուորական կեանքին մէջ:

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԸ ՀԱՄԱՐ
ՁԻՆԱԿԻՑՆԵՐՈՒՄ

Երբ կը խորհիմ մեկուսի՝ թէ Իտալիոյ գեղեցիկ
Եմ որդեգիրն, էք մինչդեռ դուք որդիներն հարազատ,
Հոս է ձեր տունն հայրենի, և ձեր հոս են սիրելիք,
Հոս է ձեր սիրտն աղածրի, բիւր հոգերէն իր ազատ,
Խոր արտամութիւն մը թեւերն իր կը սփռէ իմ վերայ,
Թէպէտ ես հոս եմ, ձեր մէջ, կը գգամ որ սիրտս է հեռուն,
Ես կը ժպտիմ ձեզի հետ, բայց ծածուկ՝ սիրտըս կու լայ
Աւերակ տան մը առջեւ, շիրիմներու անանուն:
Սոսկ մէկ վայրկեան վաղանցիկ, բայց դար մ'իբրեւ խըտացած.
Եւ ձայներն այն մեղանոյշ, և դէմքերն այն սիրելի
Այ չեմ լըսեր, չեմ տեսներ. շուրջըս միայն բոցարժարծ.
Ձէնքեր, երգեր. Իտալիան է վրտանգի մատնըւած.
Իմ և ձեր մէջ ալ չըկայ խըտիր լեզուի և ազգի,
Գաղափարի մը համար՝ հոս եմ ահա սրտարաց:

ՀՐԱԶ ՔԱԶԱՐԵՆՑ

1943